

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/48 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
4	<p>Դպրոցական կահույքի լրակազմը բաղկացած է դասասենյակների կահույքից, հանդիսությունների դահլիճի կահույքից, տնօրենի աշխատասենյակի կահույքից, ընդունարանի կահույքից, փոխտնօրենի աշխատասենյակի կահույքից, ուսուցչանոցի կահույքից, գրադարանի կահույքից, «Շախմատ» առարկայի գույքից, բուժկետի կահույքից, մարզիչի սենյակի կահույքից, հանդերձարանի և պահակակետի կահույքից, որը պետք է համապատասխանի կից ներկայացված տեխնիկական առաջադրանք-4-ին: Լրակազմում նշված ապրանքների համար երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից, երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պետք է շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Չափաբաժնում նշված ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը <math>\pm 3\%</math>: Լրակազմում նշված ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Լրակազմի տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և հավաքումը՝ իրականացվում է Մատակարարի կողմից: Եթե մատակարարումը իրականացվում է պահեստավորման վայր, ապա Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա դիմաց, իսկ Վաճառողը պարտավորվում է տեղադրման ենթակա ապրանքների տեղադրումը վերջնական վայրում իրականացնել, երբ համապատասխան ապրանքները կտեղափոխվեն վերջնական վայր՝ Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում: Մինչև մատակարարումը Լրակազմով ներկայացված ապրանքների նմուշները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել պատվիրատուի հետ:</p>







